ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136 Է. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.08.2015թ
257-5-ի

ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարար
պարոն Երվանդ Զախարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Զախարյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների երկրորդ ծրագրի իրականացման մոնիտորինգ:

Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի երկրորդ հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2015թ. օգոստոսի 1-ի դրությամբ մեկնարկվե՞լ է արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI) անդամակցելու գործընթացը:
2. Եթե այո, ապա ի՞նչ և ո՞ւմ հետ են կոնկրետ քննարկումներ, բանակցություններ և այլ նախապատրաստական աշխատանքներ տարվել:
3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ե՞րբ է ներկայացնելու անդամակցության հայտը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:
Շուշան Դոյդոյան
ԻԱԿ նախագահ